

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
«ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սեյսմիկ պաշտպանություն մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) հոդված 3-ը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 3. Սեյսմիկ պաշտպանություն իրականացնելու հիմնական նպատակը և սկզբունքները

Սեյսմիկ պաշտպանություն իրականացնելու հիմնական նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության բնակչության անվտանգության և պետության կայուն զարգացման մակարդակն ապահովող սեյսմիկ ռիսկի նվազեցումը:

Սեյսմիկ պաշտպանություն իրականացնելու հիմնական սկզբունքներն են՝

- ա) սեյսմիկ պաշտպանության բնագավառում լիազորված մարմնի կողմից (այսուհետ՝ լիազորված մարմին) միասնական պետական քաղաքականության իրականացումը.
- բ) սեյսմիկ պաշտպանության բնագավառում միասնական պետական և միջազգային միջպետական քաղաքականության մեջ պատրաստվածության և կանխարգելման սկզբունքների գերակայության ապահովումը հետևանքների վերացման նկատմամբ.
- գ) սեյսմիկ ռիսկի նվազեցման բոլոր տարրերի հավասար առաջնայնությունը.
- դ) սեյսմիկ ռիսկի նվազեցման պետական և միջազգային միջպետական ծրագրերի իրագործմանը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակայնության ներգրավումը.
- ե) սեյսմիկ ռիսկի նվազեցման պետական ծրագրերի միջազգայնացումը:»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածում՝

- 1. առաջին մասում «պետական» բառից հետո լրացնել «համալիր» բառով.
- 2. չորրորդ մասում «կանխատեսումը» բառը փոխարինել «գնահատումը» բառով:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածի է) կետից հանել «(գազամուղ, ջրամատակարարման և ջրահեռացման գծեր)» բառերը:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածում՝ է) կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «եա)» կետ.

«եա) սահմանում է տարբեր մասշտաբների սեյսմաշրջանացման քարտեզների հաստատման կարգը.»:

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածում՝

- 1. գ) կետում «սեյսմիկ ռիսկի նվազեցման բնագավառում տարվող աշխատանքները» բառերը փոխարինել «սեյսմիկ վտանգի, սեյսմիկ ռիսկի գնահատման և սեյսմիկ ռիսկի նվազեցման աշխատանքները,» բառերով.
- 2. ը) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«ը) համակարգում է սեյսմիկ պաշտպանության բնագավառում պետական ծրագրերի կատարումը, վերահսկողություն է իրականացնում սեյսմիկ ռիսկի նվազեցման պետական համալիր ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման նկատմամբ.».
- 3. ը) կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ըա)» կետ.
«ըա) սահմանում է շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության գնահատման մեթոդական ցուցումները.».

Հոդված 6. Օրենքի 10-րդ հոդվածի առաջին մասում «սեյսմաշրջանացման» բառից առաջ լրացնել «տարբեր մասշտաբների» բառերը:

Հոդված 7. Օրենքի 12-րդ հոդվածում`

1. առաջին մասում «մակերեսի» բառը փոխարինել «մակերևույթի» բառով.
2. երկրորդ մասում «սեյսմաշրջանացման» բառից հետո լրացնել «` ընդհանուր սեյսմիկ շրջանացման, մանրամասն սեյսմիկ շրջանացման, սեյսմամիկրոշրջանացման» բառերը.
3. չորրորդ մասում «համար» բառը փոխարինել «ժամանակ» բառով:

Հոդված 8. Օրենքի 13-րդ հոդվածում`

1. երրորդ մասում «ցանցի» բառը փոխարինել «ցանցերի» բառով.
2. երրորդ մասում «տեղեկատվությունը.» բառից առաջ լրացնել «, սեյսմիկ վտանգի դեպքում» բառերը:

Հոդված 9. Օրենքի 14-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 14. Սեյսմիկ ռիսկի գնահատումը

Սեյսմիկ ռիսկի գնահատումը ուժեղ երկրաշարժով պայմանավորված մարդկային, նյութական եւ այլ հնարավոր կորուստների գնահատումն է:

Սեյսմիկ ռիսկի գնահատման արդյունքում լիազորված մարմնի սահմանած կարգով կազմվում եւ հաստատվում են տարբեր մասշտաբների սեյսմիկ ռիսկի քարտեզներ, որոնք դրվում են տնտեսության զարգացման ծրագրերի, սեյսմիկ ռիսկի նվազեցման ծրագրերի հիմքում:»:

Հոդված 10. Օրենքի 16-րդ հոդվածի դ) կետում «բարձրացումը» բառից հետո լրացնել «` տարածքի սեյսմիկ վտանգին համապատասխան.» բառերը:

Հոդված 11. Օրենքի 21-րդ հոդվածի առաջին մասում «նվազագույն կորուստների ապահովման» բառերը փոխարինել «կորուստները նվազեցնելու» բառերով:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍԵՅՍԱՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախագծի ընդունումը բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի
արաջացնում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱԿԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

Մ. ՇԱՀԳԵԼԴՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և
փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

Մ. ՇԱՀԳԵԼԴՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍԵՅՍԱԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակումը հիմնավորվում է ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 40-Ն որոշման թիվ 1 հավելվածի 37-րդ կետի պահանջով: Այն նպատակ ունի հստակեցնել «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի մի շարք հասկացություններ և դրույթներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

Մ. ՇԱՀԳԵԼԴՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

«ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հոդված 1-ում փոփոխությունը կատարվում է օրենքի գործող տարբերակում առկա «նպատակ» և «սկզբունք» հասկացությունների հետ կապված անհամապատասխանությունը շտկելու նպատակով:
2. Հոդված 2-ում`
 - 1) կետի լրացումը կատարվել է` նշելու համար, որ պետական ծրագիրն իր բնույթով համալիր է.
 - 2) կետի փոփոխությունը կատարվել է` նկատի ունենալով, որ կանխատեսման ապահովումը գիտականորեն հիմնավորված չէ. խոսքը հավանականային վտանգի կանխատեսմանը` գնահատմանն է վերաբերում:
3. Հոդված 3-ում փոփոխությունը կատարվում է կենսաապահովման գծերի ցանկը չսահմանափակելու նկատառումով:
4. Հոդված 4-ում լրացումը կատարվում է` նկատի ունենալով, որ Օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները` լիազոր մարմնի կողմից մշակման, համակարգման, հաստատման, պատասխանատվության, կազմակերպման, մասնակցության դրույթները սահմանվում են ավելի բարձր իրավական ակտով:
5. Հոդված 5-ում լրացումները կատարվում են`
 - 1) նկատի ունենալով, որ սեյսմիկ վտանգի և սեյսմիկ ռիսկի գնահատումները սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված կարևոր միջոցառումներն են` Օրենքի հոդված 15 ա) ենթակետի և հոդված 16 ա) և բ) ենթակետերի հետևությամբ.
 - 2) օրենքում նշված «համակարգում և վերահսկում է սեյսմիկ պաշտպանության բնագավառում պետական ծրագրերի իրականացումը» վերահսկման մեխանիզմներ չի մատնանշում: Սեյսմիկ ռիսկի նվազեցման պետական համալիր ծրագրով նախատեսված խնդիրների կատարման նկատմամբ տեսչական վերահսկողությունը կարող է լինել առարկայական և առավել արդյունավետ.
 - 3) լրացումը պայմանավորված է Օրենքի 16-րդ հոդվածի գ) ենթակետի պահանջի առարկայացման անհրաժեշտությունից:
 - 4) նոր խմբագրությունը պայմանավորված է աշխատանքների իրականացման նեղ-մասնագիտական բնույթի և խոցելիության գնահատման ոլորտի` «սեյսմիկ խոցելիության», մատնանշման անհրաժեշտությամբ:
6. Հոդված 6-ում լրացումը պայմանավորված է սեյսմաշրջանացման բոլոր մասշտաբների աշխատանքների մատնանշման անհրաժեշտությամբ (տես նաև հոդված 7-ի 2) կետի լրացումը):
7. Հոդված 7-ում`
 - 1) ե) ենթակետի փոփոխությունը պայմանավորված է իմաստով ստույգ բառի օգտագործման անհրաժեշտությամբ.
 - 2) ե) ենթակետի լրացումը պայմանավորված է սեյսմաշրջանացման աշխատանքների տեսակների թվարկման անհրաժեշտությամբ.
 - 3) կետի փոփոխությունը պայմանավորված է բառի իմաստային համապատասխանությամբ.
8. Հոդված 8-ում`
 - 1) կետի փոփոխությունը կատարվում է` նկատի ունենալով գլոբալ ցանցերի հոգնակիությունը.
 - 2) կետի լրացումը պայմանավորված է միայն «բարձր վտանգի դեպքում» տեղեկատվության տրամադրման անհրաժեշտությամբ.

9. Հոդված 9-ում նոր խմբագրությունը նկատի ունի, որ «հնարավոր կորուստները» կարելի է ինչ-որ հավանականությամբ կանխատեսել, այս դեպքում ճիշտ է օգտագործել «գնահատել» բառը: Հստակեցվել և լրացվել են սեյսմիկ ռիսկի քարտեզի կիրառման ոլորտները:

10. Հոդված 10-ում լրացումը կատարվել է, նկատի ունենալով, որ սեյսմակայունության բարձրացումը ինքնանպատակ չէ, այլ նկատի է առնվում տարածքի սեյսմիկ վտանգի որոշակի մակարդակ:

11. Հոդված 11-ում փոփոխությունը կատարվել է՝ նկատի ունենալով, որ «արագ արձագանքման համակարգը» չի կարող «նվազագույն կորուստներ ապահովել», այլ կարող է «կորուստները նվազագույնի հասցնել»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

Մ. ՇԱՀԳԵԼԴՅԱՆ

ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ

Նախագիծը մշակել են «ՍՊԱԾ» գործակալության համակարգի հետևյալ աշխատակիցները՝ Ա. Անտոնյանը, Հ. Պետրոսյանը, Ռ. Բաղդասարյանը, Ս. Նազարեթյանը, Ա. Թովմասյանը, Մ. Ենանովը, Գ. Նամայանը, Հ. Հակոբյանը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**«ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՇԱՀԱԳՐԳԻՈ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

h/h	Առարկության հեղինակը, առաջարկության ստացման ամսաթիվը	Առարկության բովանդակությունը	Եզրակացություն
1	2	3	4
1.	<p>1. ՀՀ քաղաքաշինության նախարարություն 20.02.2009թ. N ՔՆ-26/543.</p>	<p>1. Նախագծի տեքստից հանել հոդված 4-ը, քանի որ «շենքերի խոցելիությունը» ԱՊՀ և այլ սեյսմակայուն շինարարության առաջատար երկրների նորմատիվատեխնիկական փաստաթղթերում ամրագրված, տեխնիկական առումով կանոնակարգված և չափելի հասկացություն չէ: Շիննորմերում և այլ տեխնիկական փաստաթղթերում ընդունված են «սեյսմակայունություն», իսկ վերակառուցվող շենքերի համար նաև «սեյսմազինվածություն» հասկացությունները: Այս առումով շենքերի և շինությունների սեյսմիկ ազդեցություններին դիմակայելու խնդիրները ներկայումս անհրաժեշտ մակարդակով կանոնակարգված են և նման «կարգ»-ի սահմանումը կրեթի գործառույթների անցանկալի կըրկնության և շենքերի տեխնիկական վիճակի վերաբերյալ տեղեկատվական բազայի մասնատման:</p> <ul style="list-style-type: none"> • Ինչ վերաբերում է տարբեր մասշտաբների սեյսմաշրջանացման քարտեզների հաստատման կարգին, ապա այն կարող է սահմանվել միայն իրավասու կազմակերպությունների հետ համատեղ: <p>2. Հոդված 5-ի 3-րդ կետը շարադրել առանց «տեսչական» բառի, քանի որ քաղաքաշինության բնագավառում տեսչական վերահսկողությունը վերապահված է բնագավառի լիազոր մարմնի՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչությանը:</p> <p>3. Հոդված 5-ի 4-րդ կետի «ը¹)» ենթակետն անհրաժեշտ է նախագծի տեքստից հանել, քանի որ Հայաստանի Հանրապետությունում շենքերի և շինությունների նախագծման, շինարարության և շահագործման ընթացքում պետական</p>	<p>1. Ընդունվել է ՀՀ քաղաքաշինության փոխնախարարի մոտ 21.04.2009թ. կայացած խորհրդակցության ժամանակ ձեռք բերված համաձայնությունների հաշվառմամբ՝ հոդված 4-ի «ե) 1.» կետը հանվել է և ավելացվել հոդված 5-ի 3-րդ կետում:</p> <ul style="list-style-type: none"> • Հասկանալի չէ դիտողությունը: <p>2. Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>3. Ընդունվում է, նախագծի լրամշակված տարբերակում հանված է հոդվածի 4 –րդ մասի ը) 1 կետը, համապատասխանաբա</p>

վերահսկողությունը, համաձայն գործող օրենքների, նույնպես իրականացվում է քաղաքաշինության բնագավառի լիազոր մարմնի՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության միջոցով:

- Ինչ վերաբերում է հատուկ համալիր, ինչպես նաև համալիր փորձաքննության ենթակա քաղաքաշինական փաստաթղթերի հաստատման գործընթացին մասնակցությանը, ապա այն արդեն իսկ կանոնակարգված է ՀՀ կառավարության 02.02.2002թ. N 96 որոշմամբ հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության կարգով:

- Վերը նշված առաջարկությամբ պայմանավորված «ը²)» ենթակետը ներկայացնել հետևյալ բովանդակությամբ՝ «մասնակցում է քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի համաձայնեցմանը»:

4. Վերախմբագրել հոդված 5-ի «թ)» ենթակետը, դրանից հանելով «բարձր սեյսմիկ վտանգի գոտիներում» արտահայտությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը գտնվում է բարձր սեյսմիկ ակտիվության գոտում:

5. Հոդված 7-ի 4-րդ կետում առաջարկվող պարբերությունն անհրաժեշտ ենք գտնում վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Բնակավայրերի գլխավոր հատակագծի մշակման համար կազմված սեյսմամիկրոշրջանացման քարտեզի կամայական գրունտի սպասվելիք հորիզոնական արագացման մեծությունը չի կարող լինել ավելի փոքր, քան սեյսմակայուն շինարարության նախագծման նորմերով տվյալ սեյսմիկ գոտու համար ընդունված մեծությունը: Սեյսմակայուն շինարարության գործող նորմերով շենքերի և շինությունների նախագծման համար սեյսմամիկրոշրջանացում չի նախատեսվում, բացառությամբ

ր փոխվել է մասերի համարակալումը: Այստեղ նկատի է առնված նաև ՀՀ արդարադատության նախարարություն 17.03.2009թ. դիտողության 6-րդ կետի գ) ենթակետը:

- Ընդունվում է, նախագծի լրամշակված տարբերակում նշվել են նաև քաղաքաշինական փաստաթղթերի **համաձայնեցման** գործընթացին լիազոր մարմնի մասնակցության դեպքերը՝ երբ սեյսմիկ գոտիավորման քարտեզների մշակումը օրենսդրության պահանջ է:

- Ընդունվում է, նոր խմբագրված «ը) 1» ենթակետում «հաստատմանը» բառը փոխարինվել է «համաձայնեցմանը» բառով:

4. Ընդունվել է, նախագծում կատարվել է առաջարկված փոփոխությունը:

5. Չի ընդունվում, քանի որ սեյսմամիկրոշրջանացման քարտեզում գրունտի սպասվելիք հորիզոնական արագացման մեծությունը կոնկրետ չափվող և հաշվարկվող մեծություն է և չի կարող ընդունվել կամայականորեն: Այն կազմվում է միայն գործող իրավական ակտերի՝ «Սեյսմամիկրոշրջանացման աշխատանքների իրականաց-

<p>2. ՀՀ քաղաքաշինության նախարարություն 04.09.2009թ. ՌՔՆ-26/3484.</p>	<p>առավել պատասխանատու տրանսպորտային և հիդրոտեխնիկական կառույցների: Եթե բնակավայրի գլխավոր հատակագծի համար անհրաժեշտ է ունենալ սեյսմամիկրոշրջանացման քարտեզ, ապա այն պետք է կազմել միայն գործող նորմերի պահանջներին համապատասխան՝ չփոխելով տվյալ սեյսմիկ գոտու համար նախատեսված արագացման արժեքը և գրունտների կարգի հաշվառման գործակիցները»:</p> <p>1. Նախագծի Հոդված 5-ի. 1) 3-րդ կետով նախատեսված. ա. «ը) 1.» ենթակետում «համալիր փորձաքննության ենթակա քաղաքաշինական» բառերից հետո լրացնել «ծրագրային» բառը:</p> <p>բ. «ը) 2.» ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «ը) 2. սահմանում է շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության գնահատման աշխատանքների իրականացման մեթոդական ցուցումները»: Առաջարկությունը պայմանավորված է նրանով, որ նման կարգավիճակով փաստաթղթի ընդունումը հետագայում բացասաբար չի անդրադառնա շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության արդեն իսկ կարգավորված ոլորտի գործունեության վրա և կծառայի որպես մեթոդական ուղեցույց շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության գնահատման աշխատանքներ իրականացնողների համար:</p> <p>2) 4-րդ կետում «իրականացնում է» բառը փոխարինել «մասնակցում է» բառով:</p> <p>2. Նախագծի Հոդված 7-ի 4-րդ կետից հանել «Բնակավայրերի գլխավոր հատակագծի մշակման համար կազմված սեյսմամիկրոշրջանացման քարտեզը չի կարող օգտագործվել կոնկրետ կառույցների նախագծային փաստաթղթերի մշակման համար:» նախադասությունը, քանի որ այն հակասում է գործող նորմատիվատեխնիկական և իրավական փաստաթղթերի պահանջներին:</p>	<p>ման կարգը» հաստատելու մասին ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.06.2007թ. N 45 և ՀՀ տարածքային կառավարման նախարարի 11. 07. 2007թ. N 08 –Ն համատեղ հրամանով հաստատված պահանջներին համապատասխան:</p> <p>1. 1) ա. Ընդունվում է, ենթակետը խմբագրվել է, «քաղաքաշինական» բառից հետո լրացվել է «ծրագրային» բառը:</p> <p>բ. Ընդունվում է, նախագծում կատարվել է առաջարկվող փոփոխությունը:</p> <p>2) Ընդունվում է, նախագծում կատարվել է առաջարկվող փոփոխությունը: 2. Ընդունվում է, նախագծում կատարվել է առաջարկվող փոփոխությունը:</p>
---	--	---

2.	<p>3. << Արդարադատության նախարարություն 17.03.2009թ. Ե 1385</p>	<p>1. Նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է նշել օրենքի լրիվ անվանումը, որտեղ կատարվում է լրացումներն ու փոփոխությունները՝ ելնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40 –րդ հոդվածի 1 –ին մասի պահանջներից: Բացի այդ, նախագծի 1 –ին հոդվածի 2) –րդ մասում, 2 –րդ, 6 –րդ, 7 –րդ, 8 –րդ, 9 –րդ, 11 –րդ և 12 –րդ հոդվածներում «պարբերությունում» բառերն անհրաժեշտ է փոխարինել «մասում» բառերով, իսկ 1 –ին հոդվածի 3) –րդ մասում, 3 –րդ, 4 –րդ, 5 –րդ և 10 –րդ հոդվածներում «ենթակետում» բառերը փոխարինել «կետում» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41 –րդ հոդվածի 3 –րդ մասի պահանջները:</p> <p>2. Նախագծի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41 –րդ հոդվածի 3 –րդ մասի պահանջներին:</p> <p>3. Նախագծի 3–րդ հոդվածում «փակագծում գրված» բառերն անհրաժեշտ է փոխարինել բուն փակագծի մեջ գրված բառերով: Միաժամանակ հայտնում ենք, որ նույն հոդվածը խմբագրման կարիք ունի, մասնավորապես՝ այն չի բխում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45 –րդ հոդվածի 7 –րդ մասի պահանջներից, որոնց համաձայն՝ «իրավական ակտի բաժինների, գլուխների, մասերի, կետերի, ենթակետերի կամ պարբերությունների միջև համապատասխանաբար նոր բաժին, գլուխ, հոդված, մաս, կետ, ենթակետ կամ պարբերություն կարող է լրացվել միայն լրացուցիչ համարով», այլ ոչ թե «պրիմով»: Այդ առումով լրացվող նոր կետերն անհրաժեշտ է համարակալել հետևյալ կերպ՝ «ե) 1» և «ե) 2»: նույն դիտողությունը վերաբերում է նաև 5 –րդ հոդվածի 4) –րդ կետին:</p> <p>4. Նախագծի 4–րդ հոդվածում «ավելացնել» բառն անհրաժեշտ է փոխարինել «լրացնել» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 –րդ հոդվածի 3 –րդ մասի պահանջները: Նույն դիտողությունը</p>	<p>1. Ընդունվում է, նախագծի նշված հոդվածներում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>2. Ընդունվում է, կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>3. Ընդունվում է, նախագծի նշված հոդվածներում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>4. Ընդունվում է, նախագծի նշված հոդվածներում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>
----	---	---	--

	<p>վերաբերում է նաև նախագծի 5 –րդ հոդվածի 2 –րդ և 4 –րդ մասերին, ինչպես նաև 7 –րդ հոդվածի 4 –րդ մասին:</p> <p>5. նախագծի 6–րդ հոդվածը խմբագրման կարիք ունի, մասնավորապես, հոդվածի շարադրանքից պարզ չէ, թե կոնկրետ 10 –րդ հոդվածի որ մասում է կատարվում փոփոխությունը և արդյոք այն փոփոխություն, թե լրացում է:</p> <p>6. Նախագծի 5 –րդ հոդվածում`</p> <p>ա) 2 –րդ մասի անհրաժեշտությունը չկա, քանի որ «կազմակերպումը» արդեն իր մեջ ներառում է բոլոր անհրաժեշտ աշխատանքների, գործառույթների կատարումը, ուստիև պարզ չէ, թե «համակարգումը» իր մեջ ուրիշ ինչպիսի գործառույթներ է նախատեսելու:</p> <p>բ) 3 –րդ մասի վերաբերյալ հայտնում ենք, որ «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ` օրենք) 8 –րդ հոդվածով սահմանվում սեյսմիկ պաշտպանության բնագավառում լիազորված մարմնի լիազորությունները, այլ ոչ թե նրա կառուցվածքային ստորաբաժանումների: Այլ խնդիր է, որ լիազոր մարմինը դրա կատարումը կարող է լիազորել տեսչությանը:</p> <p>գ) 4 –րդ մասի ը) 1-ին կետում շենքերի և շինությունների և նախագծման, շինարարության և շահագործման ընթացքում խոցելիության նվազեցման միջոցառումների և պահանջների նկատմամբ պետական վերահսկողության սահմանումը որպես լիազորություն անընդունելի ենք համարում, քանի որ լիազորված մարմնի համար այն պետք է լինի ոչ թե լիազորություն, այլ</p>	<p>5. Չի ընդունվում, քանի որ հոդված 6.-ում կոնկրետ նշված է. «Օրենքի 10-րդ հոդվածի առաջին մասում «սեյսմաշրջանացման» բառից առաջ լրացնել «տարբեր մասշտաբների» բառերը: Հոդված 6-ում լրացումը պայմանավորված է սեյսմաշրջանացման բոլոր մասշտաբների աշխատանքների մատնանշման անհրաժեշտությամբ:</p> <p>6. Նախագծի 5 –րդ հոդվածում`</p> <p>ա) Ընդունվում է, նախագծի լրամշակված տարբերակում հանված է հոդվածի 2 –րդ մասը, համապատասխանաբար փոխվել է մասերի համարակալումը:</p> <p>բ) Ընդունվում է մասամբ. նախագծում լիազորված մարմնի լիազորությունների, ոչ թե կառուցվածքային ստորաբաժանման լիազորությունների սահմանման մասին է: Նախագծի լրամշակված տարբերակում «հսկողություն» բառը փոխարինված է «վերահսկողություն» բառով, հանվել է «տեսչական» բառը:</p> <p>գ) Ընդունվում է, նախագծի լրամշակված տարբերակում հանված է հոդվածի 4–րդ մասի ը) 1-ին կետը, համապատասխանաբար փոխվել է մասերի համարակալումը:</p>
--	---	---

	<p>գործունեության սկզբունք՝ ելնելով օրենքի 16 –րդ հոդվածի գ) կետի պահանջներից:</p> <p>դ) 4 –րդ մասի ը) 2 կետը դեկլարատիվ բնույթ ունի մասնավորապես՝ պարզ չէ, թե ինչ պետք է հասկանալ «մասնակցում է» հասկացության տակ, ինչպես է դրսևորվելու այն, ինչ իրավական հետևանքներ է առաջացնելու:</p> <p>ե) 5 –րդ մասի վերաբերյալ հայտնում ենք, որ պարզ չէ, թե ինչպես, ինչ ձևով է իրականացվելու շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության օպերատիվ գնահատումը: Այդ առումով գտնում ենք, որ անհրաժեշտ է սահմանել շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության օպերատիվ գնահատման կարգը:</p> <p>7. Նախագծի 7 –րդ հոդվածի 4 –րդ մասում անհասկանալի է, թե ինչու բնակավայրերի գլխավոր հատակագծի մշակման համար կազմված սեյսմամիկրոշրջանացման քարտեզը չի կարող օգտագործվել կոնկրետ կառույցների նախագծային փաստաթղթերի ստեղծման համար և օգտագործման դեպքում ինչ հետևանքներ կարող է այն առաջացնել:</p> <p>8. նախագծի 11–րդ հոդվածի ընդունումը անընդունելի ենք համարում, քանի որ պարզ չէ, թե որոնք են ոչ պետական</p>	<p>դ) Չի ընդունվում, լրացումը պայմանավորված է Օրենքի 16–րդ հոդվածի գ) ենթակետի պահանջի առարկայացման անհրաժեշտությունից, ինչպես նաև համալիր փորձաքննության ենթակա քաղաքաշինական փաստաթղթերի կազմում ներկայացվող՝ սեյսմիկ վտանգին վերաբերող նյութերը սեյսմիկ պաշտպանության ոլորտի լիազոր մարմնին պարտադիր հաստատման ներկայացնելու անհրաժեշտությամբ:</p> <p>ե) Չի ընդունվում, շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության գնահատման կարգը կսահմանվի այլ իրավական ակտով: Նրանում հաշվի կառնվի մի շարք արտասահմանյան կազմակերպությունների նմանատիպ փաստաթղթերի կազմման փորձը: (ԵՎրոկոդ-08, EUROС-08 code):</p> <p>7. Կառույցների նախագծային փաստաթղթերի ստեղծման համար գրունտի առավելագույն հորիզոնական արագացումները որոշվում են քաղաքաշինական նորմերով, կոնկրետ կառույցի համար:</p> <p>8. Ընդունվում է, նախագծի լրամշակված տարբերակում հանված է նախագծի 11–րդ</p>
--	---	--

<p>4. ՀՀ Արդարադատության նախարարություն 02.09.2009թ. Ե 4605</p>	<p>համակարգերը:</p> <p>1. Նախագծի 1-ին հոդվածում՝ ա/ անհրաժեշտ է նշել օրենքի լրիվ անվանումը, որտեղ կատարվում է լրացումներն ու փոփոխությունները՝ ելնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից: Բ/ 3)-րդ մասում և 7-րդ հոդվածի 4-րդ մասում «պարբերությունից» և «պարբերություն» բառերն անհրաժեշտ է փոխարինել համապատասխանաբար «մասից» և «մաս» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: Գ/ «ավելացնել» բառն անհրաժեշտ է փոխարինել «լրացնել» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:</p> <p>2. Նախագծի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:</p> <p>3. Նախագծի 3-րդ հոդվածում «կետում հանել բուն փակագծի մեջ գրված» բառերն անհրաժեշտ է փոխարինել «կետից հանել «(գազամուղ, ջրամատակարարման և ջրահեռացման գծեր)» բառերով:</p> <p>4. Նախագծի 5-րդ հոդվածում՝ ա/ 2-րդ մասում անհրաժեշտ է հստակեցնել «համակարգում է սեյսմիկ պաշտպանության բնագավառում ծրագրերի կատարումը» արտահայտության իրավական բովանդակությունը, մասնավորապես՝ պարզ չէ, թե այդ համակարգումը ինչ ձևերով պետք է իրականացվի: Նույն մասում նախատեսվում է վերահսկողության իրականացում սեյսմիկ ռիսկի նվազեցման պետական համալիր ծրագրով նախատեսված խնդիրների կատարման նկատմամբ: Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ Հայաստանի Հանրապետության</p>	<p>հոդվածը, համապատասխանաբար փոխվել է հոդվածների համարակալումը:</p> <p>1. ա/ Ընդունվում է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Բ/ Ընդունվում է, նախագծի 3)-րդ մասում կատարվել է համապատասխան փոփոխություն, 7-րդ հոդվածի 4-րդ մասը հանվել է: Գ/ Ընդունվում է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: 2. Ընդունվում է, նախագծի համարակալումն համապատասխանեցվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին: 3. Ընդունվում է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: 4. ա/ 2-րդ մասում առաջարկվող փոփոխությունը բովանդակային չէ, այլ խմբագրված է գործող հոդված 8-ի ը) կետը:</p>
---	---	--

		<p>Սահմանադրության 83.5 հոդվածի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի պահանջները, որոնց համաձայն՝ վերահսկողություն կարող է իրականացվել բացառապես օրենքով սահմանված կարգով:</p> <p>բ/ 3-րդ մասով լրացվող ը) 1. կետը դեկլարատիվ բնույթ ունի, մասնավորապես՝ պարզ չէ, թե ինչ պետք է հասկանալ «մասնակցում է» հասկացության տակ, ինչպես է դրսևորելու այն, ինչ իրավական հետևանքներ է առաջացնելու:</p>	<p>բ/ ը) 1. կետը խմբագրվել է, կետի սկզբում լրացվել են «ՀՀ կառավարության սահմանած կարգով» բառերը:</p>
3.	5. ՀՀ ֆինանսների նախարարություն	Դիտողություններ և առաջարկություններ չունի	-----
4.	6. ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչություն 23.12.2009թ.	<p>1. Նախագծի հոդված 5-ի բ) ենթակետում «խնդիրներ» բառն առաջարկում են փոխարինել «միջոցառումներ» բառով, քանի որ կատարման ենթակա են միջոցառումները, այլ ոչ թե խնդիրները:</p> <p>2. Նախագծի հոդված 5-ի դ) ենթակետը առաջարկում են ամբողջությամբ հանել, քանի որ այն հակասում է նախորդ՝ գ) ենթակետին:</p> <p>3. Հոդված 8-ի բ) ենթակետում օգտագործված «բարձր վտանգ» հասկացությունը որևէ իրավական ակտով սահմանված չէ, ուստի անհրաժեշտ է օգտագործել այնպիսի հասկացություն, որը կունենա իրավական ակտով հաստատված իր սահմանումը (օրինակ՝ «ուժեղ երկրաշարժ»):</p>	<p>1. Ընդունվել է, նախագծի հոդված 5-ի բ) ենթակետում «խնդիրներ» բառը փոխարինվել է «միջոցառումներ» բառով:</p> <p>2. Ընդունվել է, նախագծի հոդված 5-ի դ) ենթակետը ամբողջությամբ հանվել է նախագծից:</p> <p>3. Ընդունվել է, հոդված 8-ի բ) ենթակետում օգտագործված «բարձր վտանգի» բառերը փոխարինվել են «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված «սեյսմիկ վտանգի» բառերով:</p>
5.			4.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

Ս. ՇԱՀԳԵԼԴՅԱՆ